ՄԱՅԻՍԻ 9-Ը ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ՁԻՆՎՈՐ ԱՇՈՏ ՄԻԿՈՅԱՆ

Աշխարհը նշում է Մայիսի 9-ին երկրորդ աշխարհամարտը սանձազերծած Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի 71-րդ տարելիցը: Համամարդկային այդ հաղթանակը Աշխարհը նվաճեց ավելի քան 60 միլիոն մարդկային կյանքի գնով, որից շուրջ 27 միլիոնը վիճակվեց Խորհրդային Միության ժողովուրդներին:

1941-45 թվականների պատերազմին նվաճած հաղթանակի ավանդական տոնը նախկին Խորհրդային երկրները կնշանավորեն շքերթներով, ռազմադաշտում ընկած հայտնի ու անհայտ զինվորի գերեզմանին պետական դրոշների խոնարհումով, եկեղեցիներում զոհված մարտիկների հիշատակը խնկարկող պատարագներով...

Մայիսի 9-ը յուրովի կնշի նաեւ 91-ամյա վետերան Աշոտ պապը...

Աշոտ Միկոյանը ծնվել է 1915 թվականին, Մառնեուլիի շրջանի Խոժոռնի գյուղում: Խոժոռնին նրա գերդաստանի օրրանն է, այստեղ են ծնվել ու ապրել Աշոտի նախնիները: 1941-ին Միկոյանների ընտանիքը ռազմադաշտ ուղարկեց Աշոտի չորս ավագ եղբայրներին: Չորսից ոչ մեկը տուն չվերադարձավ: Ընտանիքի կրտսեր զավակը՝ 29 տարեկան Աշոտը, Խորհրդային բանակ զինվորագրվեց 1944-ին: Երկրորդ աշխարհամարտ անվանված սպանդին՝ նա մասնակցեց Վրաստանից ռազմադաշտ զորակոչված շուրջ 700 հազար վրացի, հայ, ադրբեջանցի, ռուս, աբխազ, օս, հույն, քուրդ... զինվորների շարքում:

Աշոտը նախ՝ ծառայեց Լենինականում (այժմ՝ Գյումրի)՝ այստեղ ամրացված, թուրքական սահմանը պաշտպանող գնդում, ապա՝ 89-րդ Հայկական հրաձգային, հետո նաեւ՝ Թամանյան կոչվող դիվիզիայում, որի շարքերում մասնակցել է 1944-45 թվականներին մղվող Սեւաստոպոլի եւ այլ քաղաքների ու վայրերի ազատագրման մարտերին: 1945-ի մարտերից մեկում հրետանավոր Աշոտ Միկոյանը ծանր վիրավորվում է, ապաքինվելուց հետո՝ տեղափոխվում Լենինական, որտեղ եւ դիմավորում է այնքա՜ն սպասված հաղթանակը: Աշոտը պատերազմից հետո՝ ստանում է երկրորդ կարգի հաշմանդամի կարգավիճակ:

1974թ., գյուղի հրապարակում Հայրենական պատերազմի զոհերին նվիրված հուշարձանի բացմանը, հուշարձանի ժապավենը կտրելու պատիվը արտոնվեց Աշոտ Միկոյանի մորը՝ հայրենիքի ազատագրման սուրբ պատերազմին չորս որդի կորցրած Թազագյուլ մայրիկին:

Այսօր Աշոտ Միկոյանի գերդաստանը Խոժոռնիի բազմանդամ ընտանիքներից մեկն է: Նա իր 6 զավակով մասնակցել ու մասնակցում է գյուղի բարգավաճման աշխատանքին: Աշոտ պապի ծերությունը զարդարում են նրա տասնչորս թոռներն ու տասնյոթ ծոռները: Նրանք ապրում են բարի կամքի տեր մարդկանց վայել ձգտումներով՝ նախանձախնդիր իրենց մարդկային ու քաղաքացիական խղճին ու պարտականություններին:

Մայիսի 9-ին, մարտական ընկերների հիշատակի կենաց-թասը բարձրացնելիս՝ նա կմրմնջա իր ավանդական օրհնությունը՝ «Ընկածների հոգիներին՝ հանգստություն, Աշխարհիս՝ խաղաղություն ու շենություն»:

Հարգարժան Աշոտ Միկոյան ու բոլոր վետերաններ, շնորհակալություն ձեզ: Խոնարհվում ենք ձեր համբերությանը, հոգու ամրությանը: Ձեր սխրանքը անմահ է: Առողջություն ձեզ ու ամենայն բարին:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Նկարում.- Աշոտ Միկոյանը ծոռան՝ Լյուդվիգի հետ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԳՈՐԾԱՐԿՎԵԼ Է ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՓԱԹԵԹԸ

Ընթացիկ տարվա մայիսի 1-ից, համընդհանուր առողջապահության ծրագրում, գործարկվել են դիֆերենցված փաթեթներ եւ ծրագրի բենեֆիցարներ: Ըստ դրանց, ում վարկանիշային միավորները չեն գերազանցում 100 հազարը, կստանան քրոնիկական հիվանդությունների դեղորայքի ֆինանսավորում:

Իրականացված փոփոխությունների համաձայն, սոցիալապես անպաշտպան ընտանիքների միասնական բազայում գրանցված քաղաքացիները, ում վարկանիշային միավորը 0-ից մինչեւ 100 հազար է, համընդհանուր առողջապահության ծրագրի շրջանակներում, կստանան քրոնիկական հիվանդությունների համար դեղորայքի ֆինանսավորում:

Ինչ վերաբերում է համընդհանուր առողջապահության ծրագրի խմբերին ու պայմաններին, ապա դա սահմանվել է հետեւյալ կերպ. միջին եկամուտ ունեցող քաղաքացիների համար, ում ամսական եկամուտը հազար լարիից ավելի է, սակայն տարեկան եկամուտը չի գերազանցում 40 հազար լարիին, կկարողանան օգտվել համընդհանուր առողջապահության եւ մասնավոր ապահովագրության փաթեթի սահմանափակ սպասարկումներից:

Բացի այդ, այդ կատեգորիայում ընդգրկված քաղաքացիները, անկախ մասնավոր ապահովագրության փաթեթի առկայությունից, ծրագրի շրջանակներում, ուռուցքային հիվանդությունների, մասնավորապես՝ քիմիաթերապիայի եւ հորմոնաթերապիայի, ինչպես նաեւ՝ ծննդաբերության ժամանակ կեսարյան հատման դեպքերում օգտվում են համընդհանուր առողջապահության ծրագրով նախատեսված սպասարկումներից:

Ցածր եկամուտներով քաղաքացիների համար, ում ամսական եկամուտը չի գերազանցում հազար լարիին, ինչպես նաեւ ինքնազբաղվածությամբ ու անօրինական եկամուտներով անձանց համար, անկախ մասնավոր ապահովագրությունից, պահպանվում է համընդհանուր առողջապահության ծրագրից օգտվելու իրավունքը, բայց որոշակիորեն սահմանափակված փաթեթով:

Սոցիալապես անպաշտպան քաղաքացիների 70 հազարից մինչեւ 100 հազար վարկանիշային միավոր ունեցող անձանց եւ 6-ից մինչեւ 18 տարեկան անչափահասների համար, համընդհանուր առողջապահության ծրագրով նախատեսված մատուցվող սպասարկումների ողջ ծավալը մնում է անփոփոխ: Միաժամանակ, չի սահմանափակվում նրանց իրավունքը՝ մասնավոր ապահովագրական փաթեթից օգտվելու հարցում:

Բարձր եկամուտ ունեցող քաղաքացիների համար, ում տարեկան եկամուտը գերազանցում է 40 հազար լարիին, չեն կարող օգտվել համընդհանուր առողջապահության ծրագրից:

Համընդհանուր առողջապահության ծրագրի սպասարկումների ծավալը սահմանվում է՝ ելնելով անհատական եկամուտների համապատասխանությունից:

Ծրագրի շրջանակներում, բոլոր խմբերի համար ֆինանսավորվում են ծննդաբերության սպասարկումները, ինչպես նաեւ, բոլոր խմբերի համար, պահպանվում է՝ պետական առողջապահության մյուս ծրագրերից օգտվելու իրավունք:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ԱՂԱՅԱՆԱԿԱՆ ՕՐԸ՝ ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ



Հայ մեծ գրող ու մանկավարժ, թումանյանական «Վերնատան» հիմնադիրներից մեկի՝ Ղազարոս Աղայանի (1840-1911թթ.) պայծառ հիշատակը ոգեկոչող արարողությունը գրողի ծննդավայրում՝ Բոլնիսիի շրջանի Բոլնիս-Խաչեն գյուղում, տոնվում է 2000 թվականից: Եվ ավանդաբար տոնահանդեսն իր շուրջն է համախմբում Վրաստանի եւ Հայաստանի մտավորականության տարբեր ներկայացուցիչների՝ դպրոցականների, ուսանողների, Աղայանի գրական ստեղծագործությունների սիրահարների:

Այս տարի հանդիսությը տեղի կունենա մայիսի 13-ին, ժամը 12:00-ին:

ՄԵԾՆ ԴԱՍԱԿԱՆ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԸ

Հայ անվանի գրող, մանկագիր ու մանկավարժ, հրապարակախոս եւ հասարակական գործիչ Ղազարոս Աղայանը ծնվել է 1840 թվականի ապրիլի 4-ին, Վրաստանի Բոլնիսիի շրջանի Բոլնիս-Խաչեն գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա՝ Թբիլիսիի Ներսիսյան դպրոցում, այնուհետեւ զբաղվել ինքնակրթությամբ: Դասավանդել է Ախալցիխեի, Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի), Երեւանի, Շուշիի դպրոցներում, եղել է Վրաստանի եւ Իմերեթիի հայկական դպրոցների թեմական տեսուչը: Աշխատել է որպես գրաշար Թբիլիսիում, Մոսկվայում եւ Սանկտ Պետերբուրգում: Եղել է էջմիածնի տպարանի կառավարիչ, խմբագրել է «Արարատ», «Աղբյուր» ամսագրերը, աշխատել է «Փորձ» հանդեսում՝ որպես քարտուղար: Աղայանը Հովհաննես Թումանյանի ղեկավարած «Վերնատան» հիմնադիրներից մեկն է:

Ղազարոս Աղայանը բազմաժանր գրող է: Հեղինակ է չափածո գործերի (բանաստեղծություն, պոեմ), վեպերի, հեքիաթների... Ունենալով բազմամյա ուսուցչական փորձ՝ հեղինակել է մի շարք մանկավարժական-մեթոդական աշխատություններ, ստեղծել է «Արեւիկ» այբբենարանը, տարրական դպրոցի՝ չորս տարիների՝ «Ուսումն մայրենի լեզվի» դասագրքերը, «Ուսումն մայրենի լեզվի, պատկերավոր, այբբենարան եւ առաջին ընթերցարան» գիրքը:

Մահացել է 1911 թվականի հունիսի 20-ին, թաղված է Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում:

Աղայանի ծննդավայր Բոլնիս-Խաչեն գյուղում գործում է գրողի տուն-թանգարանը, ուր 2000 թվականից ավանդաբար նշվում է «Աղայանական օր» տոնահանդեսը:

Ստորեւ ներկայացնում ենք Աղայանի մանկական պատմվածքներից:

ԵՐԿՈՒ ԱՅԾԵՐ

Երկու կամակոր այծ դեմ առ դեմ եկան մի նեղ գերանի վրա, որ կամուրջ էր ձգված մի գետակի վրա:

Երկուսը միանգամից չէին կարող անցնել այդ նեղ կամրջով. պետք է նրանցից մեկը ետ կանգներ եւ մյուսին ճանապարհ տար:

- Դու ե'տ գնա, որ ես անց կենամ,- ասաց մեկը:

- Ինչո՞ւ դու ետ չես քաշվում, քան թե ինձ ես առաջարկում,- պատասխանեց մյուսը:

- Քեզ ասում եմ՝ ե'տ քաշվիր, առաջ ես եմ բարձրացել կամրջի վրա:

- Ներողություն կանես: Գիտե՞ս ում հետ ես խոսում, որ դեռ բարկանում էլ ես:

Այծերը ճակատ-ճակատի զարկեցին, իրար գլուխ պատռեցին, եւ վերջը երկուսն էլ կամրջից սայթաքեցին, ջուրը թափվեցին:

ԸՆԿԵՐԱՍԵՐ ԵՂՋԵՐՈՒՆԵՐԸ

Մի սարի վրա արածում էին երկու եղջերուներ: Նրանցից մեկը մի քանի խոտ պոկեց մեկէլին տվավ՝ ասելով. - Ընդունիր եղբայր, այս խոտը, թեեւ սա ոչ մեկիս պակաս չէ: - Շատ եւ շատ շնորհակալ եմ,- պատասխանեց մեկէլը,- ինչո՞ւ չշահենք մեկ-երկու սիրտ, թեկուզ սարի խոտով:

ԵՐԿՈՒ ՁԱԳԻԿ

Երկու փոքրիկ ձագիկ մի ծղնոտ գտան՝ հասկը վրան: Հասկում շատ հատիկներ կային: Ձագիկները բռնեցին ծղնոտի ծայրից եւ սկսեցին քաշել մեկը իր կողմը, մյուսը՝ իր: Ծղնոտը կտրվեց, եւ ձագուկները վայր թափվեցին՝ ոտնիվեր: Գող ծիտը վրա հասավ եւ հասկը ճանկեց ու թռավ:

Պատրաստեց ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ

ՄՏՔԻՍ ԹՌԻՉՔԸ

Բառերն անզոր են,
Մտքերս զոր են,
Չէ՞ որ բառերս մտքերիս զոհն են...
Պետք է հավատալ,
Պետք է միշտ սիրել,
Պետք է կուրորեն վստահել, ներել...
Եկեք չճչանք, եկեք լուռ խոսե'նք,
Եկեք հավատանք, վստահենք, սիրենք,
Եկեք գեթ մի պահ ետ նայենք կյանքին՝
...Ու կզգանք՝ բարին հաղթում է չարին:
Լավ... էլ չեմ խոսի, չեմ արտահայտվի.
Գալիք բարիքը չեմ բարձրաձայնի,
Մարդի'կ, միշտ հիշեք, ինչ էլ որ լինի,
Բարին այս կյանքում մնում է բարի...

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մառնեուլիի շրջանի Շահումյան ավանի թիվ 1 հանրային դպրոց, 11-րդ դասարանի աշակերտուհի

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՋԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՁԵՌՔԵՐԸ ՍԱՌԸ

Հաճախ, անգամ շոգ օրերին, զգում եմ, որ ֆեռքիս մատները սառն են: Կոնկրետ որեւէ հիվանդությամբ չեմ տառապում, թեպետ շատ կցանկանայի իմանալ, թե ինչո՞վ է պայմանավորված ֆեռքի մատների սառնությունը:

Ե.Գեւորգյան

Թբիլիսի

Իրոք, կան մարդիկ, որոնց մատների ծայրերը սառչում են նույնիսկ տաք եղանակին: Ահա այդ երեւույթի մի շարք պատճառներ.

Ֆիզիոլոգիական պատճառներ: Եթե մատների ծայրերը մշտապես սառն են, պատճառը կարող են ֆիզիոլոգիական առանձնահատկությունները լինել: Արյան շրջանառության խանգարումը ձեռքի մատների սառնության առավել տարածված պատճառներից է: Կան մարդիկ, որոնց վերջույթներում ի ծնե արյունը դանդաղ է շրջանառվում: Միաժամանակ, արյան վատ շրջանառությունը կարող է կապված լինել նաեւ որոշ հիվանդությունների՝ խոլեսթերինի բարձր մակարդակի, սրտի հիվանդությունների եւ այլնի հետ:

Ցածր ճնշում: Ձեռքերը տաք պահեք, իսկ ձմռանը պարտադիր ձեռնոց կրեք:

Սթրեսներ: Սթրեսի ժամանակ արյան մեջ հայտնվում է մեծ քանակությամբ ադրենալին, ինչի հետեւանքով ձեռքի մատները սառչում են: Որպես կանոն, սթրեսից հետո ձեռքերը տաքանում են:

Ծխել: Նիկոտինն անոթները նեղացնող հատկություն ունի. դրան առաջինը արձագանքում են վերջույթների փոքր անոթները:

ԱՌՕՐԵԱԿԱՆ

ԻՆՉՊԻՍԻ՞ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԵՆ ՏՂԱՄԱՐԴԻԿ ՇԱՏ ԳՈՒՄԱՐ ԾԱԽՍՈՒՄ

Հետաքրքիր է, գոյություն ունի՞, արդյոք, կանանց հետ հարաբերություններունեներում տղամարդկանց ժուժկալության կամ առատաձեռնության խնդիրը, եւ դա որքանո՞վ է առնչվում կանանց հագնելու ոճին:

Ա.Վ.

Մառնեուլի

Ռոչեսթրի համալսարանի գիտնականների հետազոտությունները ցույց են տվել, որ տղամարդու աչքում կարմիր զգեստ հագնող կինն ասոցացվում է սեքսին առնչվող բնազդների հետ: Ելնելով դրանից, այն կանանց, որոնք սիրում են կարմիր գույնի հագուստ հագնել, ավելի հաճախ են ժամադրությունների հրավիրում եւ մեծ գումարներ ծախսում նրանց վրա:

Հետազոտության ընթացքում գիտնականները հարցում են անցկացրել ավելի քան 100 երիտասարդի շրջանում, որոնց մեծ մասը դեռեւս չի ավարտել համալսարանը: Տղամարդանց գրավիչ աղջիկների լուսանկարներ են ցույց տվել ու հարցրել, թե նրանցից որո՞նք են առավել գայթակղիչ թվում, եւ որո՞նց հետ նրանք ֆիզիկական շփում կցանկանային ունենալ: Լուսանկարները շրջանակված են եղել կարմիր, սպիտակ, մոխրագույն եւ կանաչ գույներով:

Միեւնույն աղջիկների մասին տղամարդիկ տարբեր կարծիք են հայտնել՝ կախված նկարի գույնից: Կարմիրը «տղամարդուն ստիպել է» տվյալ աղջկա համար երկու անգամ շատ ավելի գումար ծախսել, քան մյուսների:

Չնայած տղամարդիկ չեն գիտակցել հենց այդ գույնի ազդեցությունը, բայց նրանցից շատերը խոստովանել են, որ գույնն ինչ-որ կերպ ազդել է նրանց ընտրության վրա:

Հետազոտության հեղինակ պրոֆեսոր էնդրյու էլիոթի խոսքով, փորձի արդյունքները հերթական անգամ ապացուցել են, որ հասարակությունը կարմիր գույնը, իզուր չէ որ, համարում է սիրո գույն:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

ԻՆՉՈ՞Վ ԵՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՀԱՅ ՏՂԱՄԱՐԴԻԿ ՀԱՅ ԿԱՆԱՆՑԻՑ

Եթե հանկարծ հայ կինը տանը չի գիշերում, ասելով, թե ընկերուհու տանն էր, եւ ամուսինը զանգում է կնոջ ամենամոտ 10 ընկերուհիներին, 10-ն էլ ասում են, որ ոչ մեկի տանը կինը չի գիշերել:

Իսկ եթե ամուսինը տանը չի քնում, ասելով, որ ընկերոջ տանն էր, եւ կինը զանգում է ամուսնու 10 ամենամոտ ընկերներին, 10-ից 9-ը ասում են, որ իրենց տանն է գիշերել, իսկ մեկն ասում է, թե մինչեւ հիմա էլ իրենց տանն է. նստած նարդի են խաղում...

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՎԱՀԱՆԱՁԵՎ ԳԵՂՁԸ՝ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌ...

Շատերը վահանագեղձի խնդիրները կապում են գարնանային հիվանդությունների սրացման հետ, սակայն այս երկուսի միջեւ այնքան էլ ուղիղ կապ չկա, քանի որ հիվանդության հիմնական պատճառը յոդի չարաշահումն է կամ անբավարարությունը: Այնպես որ, եթե դուք պահպանում եք վահանագեղձի հիվանդությունների կանխարգելման հիմնական սկզբունքները, ապա գարնանն առաջացած նյութափոխանակության խանգարումը ոչ մի կապ չունի դրա հետ:

Ախտանիշները

Վահանագեղձի հիվանդություններն արտահայտվում են ախտանիշների ամբողջական համալիրով: Ախտանիշները ներառում են՝ թուլություն, գերհոգնածություն, հիշողության կորուստ, պոտենցիայի անկում, դաշտանային ցիկլի խանգարումներ, չոր մաշկ, փխրուն մազեր ու եղունգներ, այտուցված դեմք, սրտի աշխատանքի խանգարումներ, բարձր խոլեստերին, անառողջ քուն, ճնշման տատանումներ, քաշի ավելացում, դեպրեսիա:

Կանխարգելման ուղիներ

Վահանագեղձի խնդիրների վաղ հայտնաբերման դեպքում դրանց դեմ կարելի է պայքարել կենսակերպի, սննդակարգի ու սովորությունների փոփոխման միջոցով:

Խնդրի սրացմանը կարող են հանգեցնել թունավոր նյութերի ազդեցությունը (լուծիչներ, ներկեր, բենզին եւ այլն), որոնք մեծ քաղաքների օդի անբաժանելի բաղադրիչներն են: Բարդություններ կարող են առաջացնել նաեւ քիմիական նյութեր պարունակող մաքրող հեղուկները, ինչպես նաեւ՝ կապարից պատրաստված զարդերը:

Հիվանդությունն անտարբերության մատնել չի կարելի, հակառակ դեպքում կարող են առաջանալ ուռուցքային գոյացություններ, որոնք կարող են դառնալ նաեւ չարորակ:

Վահանագեղձի բուժումը պետք է նշանակի `բժիշկը ախտորոշումից ու մի շարք անալիզներից հետո: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կանխարգելման վրա: Խորհուրդ է տրվում օգտագործել յոդացված աղ, ինչպես նաեւ սննդակարգի մեջ ընդգրկել ծովակաղամբ, ձուկ, լոբի, սոյա, կաթ, գազար, շոկոլադ, հաց, հազար, խնձոր: Օրական պետք է օգտագործել 100-150 մկգ յոդ:

Կարեւոր է նաեւ իմանալ այն մթերքները, որոնք խորացնում են հիվանդությունը, դրանք են՝ սալը, մսի յուղոտ տեսակները, բողկը, շաքարը, բանանը, խաղողը, եգիպտացորենը: Վահանագեղձի հիվանդությունների զարգացման կասկածների դեպքում՝ պետք է նաեւ զգուշանալ ցիտրուսներից, բուսական յուղից, ցորենից, շաղգամից, ինչպես նաեւ մեծ քանակությամբ B, A, C վիտամիններ պարունակող մթերքներից:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ՊԱՐԶԵԼ ԵՆ ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԿՆՈՋ ՈՎ ԼԻՆԵԼԸ

Ամերիկացի դերասանուհի Ջուլյա Ռոբերտսը մոլորակի ամենագեղեցիկ կինն է ճանաչվել People ամերիկյան հանդեսի վարկածով:

«26 տարի է անցել այն ժամանակվանից, երբ Ջուլյա Ռոբերտսը առաջին անգամ հայտնվեց People-ի համարի շապիկին, որը նվիրված էր «Աշխարհի ամենագեղեցիկ կանայք» վարկանիշին, եւ նա առաջվա պես մնում է մեր սիրելի սիրունիկը»,- գրում է հանդեսը իր ինտերնետ-էջում զետեղված հոդվածում:

Հրատարակությունն ակնարկում է 1990 թվականին էկրան բարձրացած «Սիրունիկը» նշանավոր ֆիլմի անվանումը, որում գլխավոր դերը կատարել է Ռոբերտսը:

49-ամյա դերասանուհին, վերջին քառորդ դարի ընթացքում, հինգերորդ անգամ է Երկրի ամենագրավիչ կինը ճանաչվել՝ ըստ People-ի ամենամյա վարկանիշի արդյունքների: «Հինգերորդ անգա՞մ: Դա անչափ հաճելի է»,- ասել է նա հանդեսին տված հարցազրույցում՝ հասկանալ տալով, որ ինքը նման հաշվարկներով չի զբաղվել:

Հարցին՝ հուզվո՞ւմ է արդյոք, Ռոբերտսը պատասխանել է. «Հիմա կսկսեմ հուզվել: Այնպես որ, կանգ առնենք այն բանի վրա, որ դա պարզապես հաճելի է»:

2016 թվականին People հանդեսը մոլորակի ամենագեղեցիկ կինն էր ճանաչել ամերիկացի մեկ այլ դերասանուհու՝ Ջենիֆեր Էնիսթոնին:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է:

ԵՂԻՇԵ
V դար
Հայ պատմիչ

Թե գիտունի խոսքը լքես՝ քեզ ի՞նչ օգուտ գիտությունից.

Թե չծախսես՝ ասա՝ կտա՞ գեթ չնչին շահ պահուստը ինձ:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(1172-1216)
Վրաց բանաստեղծ

Ամենալավ պետությունը այն չէ, որ մարդկանց դարձնում է առավելապես երջանիկ, այլ այն, որ երջանիկ է դարձնում առավելագույն թվով մարդկանց:

ԺԱԿ ԴՅՈՒԿԼՈ
(1896-1975)
Ֆրանսիական քաղաքական գործիչ

Ժողովրդին չի կարող բաժին ընկնել ավելի մեծ աղետ, քան՝ չարագործության գնով բերված բարգավաճումը:

ՉԵՆԻՆԳ
(1780-1842)

Ամերիկացի երկրաբան

Մահը դեպի քեզ արձակված նետ է, իսկ կյանքը՝ այն ակնթարթը, որի ընթացքում նետը հասնելու է քեզ:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Շուկայական հարաբերությունների պարագայում՝ մարդն առ ու ծախի իր է:

ՌԱՖԱՅԵԼ ՏԵՐ-ՍԱՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ *Ներեցե՛ք, դուք պարո՞ւմ եք:*

- Հա, չես տեսնո՞ւմ..

- Ի՞նչ լավ է, ես էլ մտածեցի հոսանքն է խփել:

☺ *Քննության ժամանակ.*

- Ինչպե՞ս ես համարձակվել այսպես քննության ներկայանալ: Ախր, ընդհանրապես չես պարապել:

- Ներեցե՛ք, պրոֆեսո՛ր, ես գիտեի քննությունը վաղն է:

☺ *Բազկաթոռին թողնելով նստած այցելուին՝ ատամնաբույժը դուրս է գալիս սենյակից ու՝ սկսում անհանգիստ դեսուդեն գնալ, քորել գլուխը: Ծխախոտ է կպցնում եւ՝ անմիջապես դեն նետում: Բուժքույրը հարցնում է.*

- Ի՞նչ է պատահել: Ծա՞նր դեպք է:

- Ծանրագույն. այցելուն անթիվ-անհամար փող ունի ու չունի մի անառողջ ատամ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՏԱԿԵՑՎԵՑ ՆՈՐԸՆՏԻՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ

ՆԵՐԿԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԾՆՈՒՆԴՈՎ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻՑ ՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Է

Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը արձանագրություն է կազմել եւ՝ հրապարակել այն պատգամավորների անունները, ովքեր, ապրիլի 2-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում, նորընտիր, վեցերորդ գումարման խորհրդարանի մանդատ կստանան:

Նշենք, որ 2017-ի՝ Հայաստանի Ազգային ժողովի ընտրություններին մասնակցել էին 5 կուսակցություն եւ 4 դաշինք: Քվեարկության արդյունքում, Ազգային ժողով են անցել՝ ՀՀԿ, «Ծառուկյան» դաշինք, «Ելք» դաշինք, ՀՅԴ:

2015թ. սահմանադրական փոփոխությունների հանրաքվեից հետո՝ փոփոխություններ կատարվեցին մի շարք օրենքներում, այդ թվում՝ Ընտրական օրենսգրքում: Այդ փոփոխությունների արդյունքում, նորընտիր Ազգային ժողովն ունենալու է 105 պատգամավոր՝ ներկայիս 131-ի փոխարեն: Նոր կազմով խորհրդարանն իր առաջին նիստը կգումարի մայիսի 18-ին:

Հանրապետական կուսակցությունը խորհրդարանում կազմում է մեծամասնություն: Վերջինիս բաժին է հասել 58 մանդատ, որից 27-ը՝ տարածքային ցուցակներով, 28-ը՝ հանրապետական ցուցակի առաջին մասով: Հանրապետական խմբակցությունն ունենալու է նաեւ ազգային փոքրամասնության 3 ներկայացուցիչ՝ ազգությամբ եզդի Ռուստամ Մախմուդյանը, ասորի Արսեն Միխայլովը եւ քուրդ Կնյազ Հասանովը:

«Ծառուկյան» դաշինքը ստացել է 31 մանդատ, որից 15-ը՝ տարածքային ցուցակներով, 15-ը՝ հանրապետական ցուցակի առաջին մասով: Այս քաղաքական ուժը խորհրդարանում կունենա ազգային փոքրամասնության մեկ ներկայացուցիչ՝ ազգությամբ ռուս Տատյանա Միքայելյանը:

Խորհրդարանական ընտրությունների ժամանակ՝ «Ելք»-ը ստացել է 9 մանդատ, որոնցից 4-ը՝ տարածքային ցուցակներով, այն էլ՝ միայն Երեւան քաղաքում, իսկ 5-ը՝ հանրապետական ցուցակի առաջին մասով:

ՀՅԴ-ն այս նոր գումարման Ազգային ժողովում կունենա 7 պատգամավոր, որից 3-ը՝ տարածքային ցուցակներով ընտրված, 4-ը՝ համապետական ցուցակի առաջին մասից:

Նշենք, որ նորանկախ Հայաստանի արդեն թվով վեցերորդ գումարման Ազգային ժողովում առաջին անգամ ծնունդով Սամցխե-Ջավախեթիից կլինի ընդամենը երկու պատգամավոր՝ Արման Սահակյանն ու Շիրակ Թորոսյանը: Եթե ընտրված պատգամավորներից ոմանք նշանակվեն գործադիր իշխանությունում, ապա ՀՀԿ-ի համամասնական ցուցակով, առաջինը խորհրդարանում ընտրվելու հնարավորություն կունենա Տաճատ Վարդապետյանը ցուցակում թիվ 32, ապա եւ՝ Հովհաննես Սոֆոյանը (թիվ 35):

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ՝ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Մայիսի 4-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը անցկացրել է խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի նախագահի անցյալ տարվա դեկտեմբերի կարգադրությամբ ստեղծված՝ Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խմբի գործունեության ընթացքը եւ միջանկյալ արդյունքները, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող օրենքների նախագծերի նախապատրաստման վիճակը:

Խորհրդակցությանը Սերժ Սարգսյանին, մասնավորապես, ներկայացվել են հակակոռուպցիոն նոր մարմնի կարգավիճակին, դրա կազմավորմանը եւ գործառույթներին, անկախության երաշխիքներին, ինչպես նաեւ բյուջետային ֆինանսավորմանը վերաբերող մի շարք հարցեր:

Խորհրդակցությանն ընդգծվեց կոռուպցիայի արդյունավետ կանխարգելմանը վերաբերող այնպիսի հիմնարար խնդիրների ամբողջական լուծման կարեւորությունը, ինչպիսիք են պաշտոնատար անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրերի վերլուծությունն ու դրանց արժանահավատության ստուգումը, այդ նպատակով հավելյալ տեղեկատվության հասանելիության ապահովումը, ապօրինի հարստացման դեպքերի բացահայտման գործում իրավապահ մարմինների հետ համագործակցության ուժեղացումը, ինչպես նաեւ՝ շահերի հայտարարագրման կառուցակարգերի ներդրման միջոցով, շահերի բախման կանխարգելումը:

Խորհրդակցության արդյունքներով աշխատանքային խմբի ղեկավարին տրվել են հանձնարարականներ, հստակեցվել են նախագծերի մշակման աշխատանքներն ավարտելու ժամկետները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ապրիլի 29-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Քաղցկեղի վերահսկման միջազգային միության նախագահ, Նորին Արքայական Մեծություն Հորդանանի արքայադուստր Դինա Միրեդին, ով Հայաստան է ժամանել Երեւանի պետական բժշկական համալսարանի հրավերով՝ մասնակցելու ԵՊԲՀ-ի եւ Արյունաբանության եւ ուռուցքաբանության հայկական ասոցիացիայի կողմից կազմակերպված՝ «Քաղցկեղը վերապրածների կոնգրեսին»:

Հայաստանի նախագահը դրվատանքի արժանի է համարել Նորին Արքայական Մեծության մասնակցությունը Հայաստանում կազմակերպված առողջապահության բնագավառի կարեւոր ու արդիական այդ միջոցառմանը:

Նորին Արքայական Մեծություն Հորդանանի արքայադուստր Դինա Միրեդը շնորհակալություն է հայտնել նախագահին ընդունելության համար եւ նշել, որ անչափ ուրախ է գտնվել հիասքանչ Հայաստանում, որի մասին շատ է լսել իր երկրում, որտեղ հայկական մեծ եւ՝ հասարակության կողմից հարգանք ու վստահություն վայելող համայնք կա: Որպես Քաղցկեղի վերահսկման միջազգային միության նորընտիր նախագահ՝ Դինա Միրեդը ներկայացրել է Հայաստան իր այցի հիմնական նպատակը, խոսել՝ իր գլխավորած կազմակերպության գործունեության ու ծրագրերի մասին եւ՝ Հայաստանի նախագահի հետ քննարկել Հայաստանում քաղցկեղի դեմ պայքարի գործում հաջողության հասնելու հնարավորություններն ու ուղիները: Հորդանանի արքայադուստրը զրույցի ընթացքում ընդգծել է նաեւ քաղցկեղածին ազդեցություն ունեցող երեւույթներից մեկի՝ ծխելու դեմ պայքարի անհրաժեշտությունը՝ ողջունելով վերջին տարիներին այդ ուղղությամբ Հայաստանում իրականացվող աշխատանքը:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ «ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ» ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հայաստանի տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը այցելել է Լոռու մարզ, որտեղ անցած տարվանից ընթանում է Մ6՝ «Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման», միջպետական ավտոճանապարհի վերականգնման ու բարելավման ծրագիրը:

Նախագծի առաջին մասը ֆինանսավորում է Եվրոպական ներդրումային բանկը, շինարարական աշխատանքներն ընդգրկում են միջպետական ավտոճանապարհի 38 կմ հատվածը:

Ներկայում ընթանում են առկա ենթակառուցվածքների տեղափոխման, հողային ծածկի քանդման, արհեստական կառուցվածքների տեղադրման ու հենապատերի կառուցման աշխատանքներ:

Ընկերության տնօրենը հավաստիացրեց, որ շինարարությունն ընթանում է ըստ նախագծի սահմանված ժամանակացույցի, եւ մինչեւ ամռան սկիզբը կավարտվեն ենթակառուցվածքների վերամոնտաժման աշխատանքները:

Հիմնանորոգվող միջպետական ճանապարհին գտնվող 2 թունելները վերանորոգվում են, իսկ երրորդն ամբողջությամբ վերակառուցվում է: Անցած տարվա նոյեմբերի այցից հետո, թունելում շինարարությունը չի դադարել, կատարվել են բետոնապատման աշխատանքներ: Ճանապարհի 12 կամուրջներից 3-ը հիմնովին քանդվելու եւ նորից կառուցվելու են, մյուս ինը կվերանորոգվեն: Աշխատանքներն իրականացնում է «Կապավոր» ընկերությունը:

Եվրոպական ներդրումային բանկի կողմից նշանակված շինարարական աշխատանքները վերահսկող ներկայացուցիչները, ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ողջ ընթացքում, հետեւում են ծրագրի համապատասխանությանն ու անվտանգության նորմերի պահպանմանը:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հանրային լրագրության ակումբը (ՀԼԱ), Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամը (ՏԵՊԱՎ), Սիլիկոնյան հովտում գործող աշխարհի առաջին ներդրումային աքսելերատոր «Էնջել լաբս»-ի հետ համագործակցությամբ, Երեւանում առաջին անգամ անցկացրեցին Հայաստան-Թուրքիա ներդրողների հանդիպում:

Միջոցառման նպատակն էր՝ խթանել Հայաստանում եւ Թուրքիայում հրեշտակներդրողների ցանց ստեղծելու գաղափարը եւ ներկայացնել ներդրողների ցանցերի տարբեր ֆեւաչափերն ու միջազգային լավագույն փորձը:

Միջոցառման բացման արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկան նախաձեռնության հեղինակներ ՀԼԱ նախագահ Սեդա Մուրադյանը, ՏԵՊԱՎ-ի ներկայացուցիչ Ջանսու Սարաջը եւ «Էնջել լաբս»-ի տնօրեն Թուգչե Էրգյուլը, ինչպես նաեւ Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանտիեն եւ ԱՄՆ դեսպանատան տնտեսական եւ առեւտրական ներկայացուցիչ Ռաֆայել Սամբուն:

ՆՈՐԱԾԻՆ ՀԵՂՁԱԿԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ 7,5 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ

Մայիսի 3-ին՝ ժամը 04:00-ին, Երեւանի «Էրեբունի» բժշկական կենտրոնում ծնվել է հնգյակ՝ 1 տղա, 4 աղջիկ: Ծնողները՝ Վարդան Կարապետյանն ու նրա կինը՝ Լուսինե Պողոսյանը, երեխաներին անվանել են Արա, Աննա, Լիլիթ, Ռոզի, Թեհմինե: Մեծամորցի նորածիններից յուրաքանչյուրի համար, ծննդյան կապակցությամբ, կտրամադրվի 1,5 մլն դրամ: Այս մասին հայտնեց Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության մամուլի քարտուղար Անուշ Դանիելյանը: «Ընտանիքը կստանա 7.5 մլն դրամ, որից՝ 2,5 մլն դրամն ուղղակիորն կտրամադրվի ծնողներին, իսկ մնացած 5 մլնը կփոխանցվի յուրաքանչյուր երեխայի անվամբ բացված ընտանեկան դրամագլխի հաշվին, յուրաքանչյուրին՝ 1 մլն դրամ»,- հայտնել է նա:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱ 50641 ԿԻՆ ՎԱՐՈՐԴ. ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՎԹԱՐՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՔԻՉ ԵՆ

Հայաստանում հաշվառված է վարորդական վկայականներ ստացած իգական սեռի 50641 ներկայացուցիչ: Ճանապարհային ոստիկանության պլանավորման, հաշվառման եւ վերլուծության բաժնի տվյալների համաձայն, 2016թ. Հայաստանի վարորդական վկայականներ են հատկացվել իգական սեռի 9768 ներկայացուցչի:

2016թ. Հայաստանում պետական վիճակագրական հաշվառման է վերցվել վիրավորներով եւ զոհերով 3203 ճանապարհատրանսպորտային պատահար, որից ընդամենը 44 պատահարի մասնակից է եղել կին վարորդ, 2-ի դեպքում վարորդները մահացել են:

ՏԱՐԱԳՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(5 մայիսի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	483,70	486.50
ԵՎՐՈ	529,00	536.00
ՌՈՒԲԼԻ	8,15	8,38

Ապրիլի 27-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը մնացել է անփոփոխ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՅԻՍ

8.05.2017. Երկրորդ Ծաղկազարդ

Քրիստոսի Համբարձման տոնին հաջորդող կիրակի օրը Հայ Առաքելական Եկեղեցին նշում է Երկրորդ Ծաղկազարդը: Տոնի անվանումն առաջացել է Զատիկի՝ Սուրբ Հարությանը նախորդող Ծաղկազարդի տոնի անվանումից: Վերջինս խորհրդանշում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, երբ մարդիկ Տիրոջը դիմավորում էին փառաբանությամբ ու ցնծությամբ եւ՝ ծառերի ճյուղեր սփռում Նրա առաջ:

Երկրորդ Ծաղկազարդն արդեն համբարձյալ Քրիստոսի Վերին Երուսաղեմ մտնելու հիշատակն է, երբ Նրան ցնծությամբ դիմավորում էին հրեշտակները:

ՆՈՐՈՒՅԹ

ՇԽԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԸ ԿԳՈՐԾԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ

Երկրի կառավարության եւ խորհրդարանի միջեւ ներքին խորհրդատվությունների արդյունքում, հասարակական վայրերում ծխելու արգելքը հետաձգվել է մեկ տարով, եւ այն ուժի մեջ կմտնի 2018 թվականի մայիսի 1-ից: Այդ մասին հայտարարեց օրինանախագծի նախաձեռնող պատգամավոր Գուգուլի Մաղրաձեն:

«Գրեթե մեկամսյա խորհրդատվություններից հետո՝ կառավարության հետ փոխհամաձայնության հասանք ժամկետների հարցում: Տրվում է մեկ տարի եւ՝ հասարակական վայրերում ծխելն արգելելու մասին օրենքը ուժի մեջ կմտնի 2018 թվականի մայիսի 1-ից»,- հայտարարեց պատգամավորը:

ԴՊՐՈՑ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԳԻՔՈՐԸ» ԲԵՄԱԴՐՎԵՑ ՎՐԱՑԵՐԵՆ

Հայ արձակի գլուխգործոցներից է Հովհաննես Թումանյանի «Գիքորը» մանկական պատմվածքը: Քաղաքի բարքերին զոհ դարձած գյուղացի պատանու ողբերգական պատմությունը իր հուզական ազդեցությամբ եզակի ստեղծագործություն է: Գիքորի ճակատագիրը ցնցել է եւ ցնցում է սերունդների: Ասենք նաեւ, որ «Գիքորը» Հայաստանում էկրանավորվել է 2 անգամ՝ 1934 եւ 1982 թվականներին, իսկ հայ թատրոնում՝ բեմադրվել բազմիցս:

Իսկ մի լանի օր առաջ, «Գիքորը» պատմվածքի բեմականացմամբ, հանդես եկան... մայրաքաղաքի թիվ 103 դպրոցի հայկական մասնաճյուղի աշակերտներ:

Վրաց լեզվի ուսուցչուհի Դալի Փեիքրիշվիլին պատմվածքը թարգմանել էր վրացերեն ու՝ բեմադրել: Դերերում ընդգրկված էին VI եւ VIII դասարանների աշակերտներ, իսկ Գիքորի դերակատարը չորրորդ դասարանցի Արթուր Բաղդասարյանն էր, ով իր խաղով կարողացավ հուզել հանդիսատեսին: Մասնակիցներից յուրաքանչյուրը լավ էր պատկերացնում իր դերը եւ կարողացավ առանց շփոթվելու, գեղեցիկ կերպով ներկայացնել կերպարը:

Նման միջոցառումների կարեւորության մասին խոսեցին դպրոցի տնօրեն Արչիլ Չխաիձեն, ուսմասվար Հասմիկ Պապիկյանը, տողերիս հեղինակը, «Հայարտուն» կենտրոնի կրթության բաժնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանը:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության փորձագետ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏ - 2017

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ինչպես տեղեկացրել է ազգային քննական կենտրոնը, հաստատվել է 12-րդ դասարանի աշակերտների ավարտական քննությունների ժամանակացույցը: Այսպես, մայիսի 21-ին կանցկացվեն վրաց լեզվի եւ գրականության, վրացերենը որպես երկրորդ լեզու եւ աշխարհագրության քննությունները: Մայիսի 22-ին՝ օտար լեզուների ու կենսաբանության առարկայական քննությունները: Մայիսի 23-ին՝ պատմության ու ֆիզիկայի, մայիսի 24-ին՝ մաթեմատիկայի ու ֆիզիկայի եւ մայիսի 25-ին՝ քիմիայի առարկայական քննությունները:

ՍՊՈՐՏ

ՎՐԱՑ ՁՅՈՒԴՈՅԻՍՏՆԵՐԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԻՆՆԱԿԻ ՉԵՄՊԻՈՆ

Վարշավայում եզրագիծը հատեց ձյուդոյի մարզաձեւի Եվրոպայի թիմային առաջնությունը: Մրցաշարի եզրափակիչում Վրաստանի ձյուդոյիստները 3:2 հաշվով առավելության հասան Ռուսաստանի հավաքականի նկատմամբ եւ իններորդ անգամ նվաճեցին մայրցամաքի չեմպիոնի կոչումը: Բրոնզե մեդալակիրներ դարձան Ուկրաինայի եւ Հունգարիայի ձյուդոյիստները:

ՆՎԱՃԵՑԻՆ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ՄԵԴԱԼՆԵՐԸ

Վրաց սուսերամարտիկները, Մինսկում անցկացված Եվրոպայի երիտասարդական առաջնությունում, նվաճեցին ոսկե մեդալ: Եզրափակիչում վրաց մարզիկները 45:36 հաշվով պարտության մատնեցին Իտալիայի հավաքականին եւ առաջին անգամ դարձան մայրցամաքի չեմպիոններ: Մինչ այդ, Վրաստանի թիմը 45:34 հաշվով պարտության մատնեց Բուլղարիայի հավաքականին, 45:31 հաշվով՝ Ռումինիային, իսկ կիսաեզրափակիչում՝ 45:41 հաշվով Ռուսաստանի հավաքականին:

ՖՈՒՏԲՈԼ. ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՀՊԱՆԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԴԻՐՔԵՐԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան հրապարակեց ազգային հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը: ՖԻՖԱ-ի դասակարգման նոր աղյուսակում թե՛ Վրաստանի եւ թե՛ Հայաստանի հավաքականները պահպանել են իրենց դիրքերը: Վրաստանի թիմը զբաղեցնում է 122-րդ հորիզոնականը, իսկ Հայաստանի ազգային ընտրանին աղյուսակում 67-րդն է:

Չի փոխվել նաեւ աղյուսակի գլխամասի լավագույն տասնյակը: Աղյուսակը գլխավորում է Բրազիլիայի հավաքականը: Երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցնում են Արգենտինայի ու Գերմանիայի թիմերը: Առաջատարներին հետեւում են Չիլիի, Կոլումբիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Պորտուգալիայի, Շվեյցարիայի եւ Իսպանիայի հավաքականները:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Եկեղեցական ստորին պաշտոնյա՝ սարկավագից կրտսեր: 8.Միջին դարերում Արեւմտյան Եվրոպայում Պիրենյան թերակղզու եւ Հյուսիսային Աֆրիկայի արեւմտյան մասի իսլամադավան բնակչության անվանումը: 10.Նույնպիսի: 11.ԱՄՆ Կոլորադո նահանգի 64 վարչական միավորներից մեկը: 13.Իտալական ավտոմեքենա: 15.Աշխարհահռչակ ռեժիսոր ... Սփիլբերգ: 16.Քնահատ: 17.Իտալացի ֆուտբոլիստ Ֆրանչեսկո ...: 19.Ետ մղել, վտարել: 23.Ռուս էթնոլոգ, ճանապարհորդ ...-Մակլայ: 26.Բացառությամբ, զատ: 27.Փաստացիորեն, դե ...: 28.Մանրահատիկ ապար: 29.Գյուղ Հայաստանի Սյունիքի մարզում: 32.Անտառի խիտ՝ ստվերոտ ու մութ տեղ: 33.Չափազանց նուրբ, քնքուշ, սպիտակ: 36.Քաղաք Սերբիայում: 37.Դյուրավառ հեղուկ: 39.Քիմիական տարր, դեղնականաչավուն հեղձուցիչ գազ: 40.Վրաց ռեժիսոր, սցենարիստ ... Գելաշվիլի: 42.Ծանրության ռուսական չափ: 43.Քաղաք Դաշտային Կիլիկիայում: 44.ԱՄՆ երգչուհի: 45.Գետ Ռուսաստանի Եվրոպական մասում: 46.Մետաղյա ձող, գործիք: 47.Ամերիկացի տիեզերագնաց ... Արմսթրոնգ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մեջտեղը գտնվող, միջակ: 2.Հավերժ: 3.Թույնի մեջ թաթախված: 4.Մտքով ընկալելի բովանդակություն: 5.Ցիրուցան, խառնիխուռն: 6.Անգլիացի գրող, բանաստեղծ Ալան Ալեքսանդր ...: 9.Անհամար, բազմաթիվ: 12.Սիրուն, գեղանի: 14.Հայ ծանրորդ ... Ավետիսյան: 18.Բռնի կերպով ձեռքից վերցնող, զավթող: 20.Քաղաք Իրանում: 21.Ծովային տրանսպորտ: 22.Երկրի մակերեւույթի ջրով լցված գոգավորություն, որը կապված չէ օվկիանոսի հետ: 23.Մրգանուշ: 24.Աստվածաշնչի կամ Ավետարանի բաղկացուցիչ մաս: 25.Ծիծաղիր (ժող.): 30.Հապաղել, ետանալ: 31.Ճշմարիտ, հավաստի: 34.Կապան քաղաքը հնում: 35.Փարթամորեն աճել: 38.Ամերիկյան նշանավոր ռեժիսոր, գրող ... Ալլեն: 41.Մեսրոպյան այբուբենի տառ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Օգսեն: 5.Պանդոկ: 10.Դալուկ: 11.Մաճկալ: 13.Ծմակ: 14.Մուրաբա: 16.Տքնել: 17.Անցողիկ: 20.Եվա: 21.Նա: 22.Ռոպե: 24.Դրամա: 27.Գրիգոր: 30.Են: 31.Նոդար: 32.Կամսար: 33.Ունկ: 34.Աիդա: 37.Անի: 38.Ագի: 39.Անրակ: 40.Տա: 43.Ար: 44.Նինա: 46.Ակտ: 48.Աթանես: 50.Դրոգ: 51.Ռե: 52.Ադամ: 53.Սար: 54.Ազատ: 55.Արի: 56.Քնատ: 57.Սառա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Գոճի: 3.Երամ: 4.Մարաշ: 5.Պումա: 6.Ակ: 7.Դուման: 8.Կակուլի: 9.Ամենա: 12.Լուսին: 15.Պոեմ: 16.Տարոն: 18.Նարեկ: 19.Կագոր: 23.Որոտան: 25.Անահիտ: 26.Անսալ: 28.Իսանի: 29.Արշակ: 33.Ուգանդա: 35.Իրատես: 36.Դար: 37.Ազդարար: 39.Արագվի: 41.Առնետ: 42.Անսարք: 45.Արմատ: 47.Նորմա: 49.Արազ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445